[ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ]

Ստորև փորձում եմ համառոտակի շարադրել իմ, մոտ 60-ամյա աշխատանքային գործունեության «ոդիսականը», որը ինքնին մի հաշվետվություն է, թե որպես ճարտարապետ ինչ եմ արարել, ինչ պայմաններում, իսկ թե այդ ամենը ինչ ճարտարապետական-ստեղծագործական արժեք ուներ, թողնում եմ այստեղ շարադրվածը ընթերցողի, գործերին ուշադիր ծանոթացողի հայեցողությանը-գնահատանքին։

1934 թ., դեռևս ուսանող, բախտ ունեցա մի քանի ամիս աշխատել ճարտարապետության ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի Երևանի քաղխորհրդի հատակագծման (քաղաքաշինական) արվեստանոցում, զբաղվելով Ս. Շահումյանի անվան հրապարակի և նրա շրջապատի մշակման գծագրերի կատարումով։ Այդ ինձ հնարավորություն ընձեռեց մոտիկից շփվելու իրոք մեծ ճարտարապետ և ընդհանրապես մեծ մարդու, եզակի անձնավորության հետ, տեսնել, տեսնել ու զգալ նրա հոգսերով ու ապրումներով լի առօրյա, նրա ներքին լիցքի արտաքին արտահայտությունները։

Ես, թեպետ նախապատրաստված չէի լիուլի բավարարել նրա սպասելիքները գործում օգտակար լինելու առումով, բայց նա այնքան բարյացակամություն էր ցուցաբերում տակավին երիտասարդիս նկատմամբ, որ ես քաշվում, անհարմար էի զգում։ Օրինակ՝ նա սիրով հանդուրժեց, որ ես իր կողքին կանգնած լինեմ, ներկա գտնվեմ, երբ քաղաքի գլխավոր ճարտարապետ, պրոֆեսոր Նիկողայոս Բունիաթյանի խնդրանքով նայում էր ճարտարապետ Նիկոլայ Բանի Արդարադատության ժողկոմատի շենքի նախագիծը, որի շինարարությունը սկսվել էր Շահումյանի պուրակի դիմաց, «Սևան» հյուրանոցի շարունակության վրա։ Ընդամենը մի քանի հանգիստ ասված խոսք և ճարտարապետ Բանը առանց հապաղելու հայտնեց իր համաձայնությունը Թամանյանի առաջարկությանը՝ նախագծից վերացնել ժամացույցի աշտարակը, քանի որ Ն. Բունիաթյանի նախագծով կառուցված «Սևան» հյուրանոցի շենքը իր վերևում արդեն ուներ ժամացույցի աշտարակ։ Բանը ևս կարճ արտահայտվեց՝ «կարվի այնպես, ինչպես գտնում եք»։ Եվ այդպես էլ արվեց, այդ շինության վրա աշտարակ չկառուցվեց։

Իհարկե, ոչ բոլոր դեպքերում էր Թամանյանը հանգստությամբ հարթում անսպասելի կնճռոտ դեպքերը։ Այսպես՝ նույն սենյակում էր աշխատում նաև ճարտարապետ Արշավիր Մինասյանը։ Նա առանձնանում էր գծագրերի տպավորիչ ձևակերպումներում։ Մի անգամ Թամանյանը սովորական թերթի վրա մշակած էսքիզը տալով Մինասյանին, հանձնարարեց անհրաժեշտ մասշտաբով գծագրեր պատրաստել, ըստ երևույթին կառավարությանը ներկայացնելու համար։ Թամանյանի հանձնած էսքիզը վերաբերում էր երբեմնի «Ղանթարի» շուկայի վերացմամբ ազատված տեղանքում Կիրովի անվան այգու[1] ստեղծմանը։ Թամանյանի էսքիզով նախատեսված էր այգու այնպիսի լուծում, որի դեպքում հարմարագույն ձևով այդ այգին ստորգետնյա անցուղով կապվեր «Կոմայգու»[2] հետ, այնպես որ կարիք չլիներ Շահումյանի փողոցը[3] անցուդարձել։ Այդ հանգամանքը լավ չընկալելով ճարտարապետ Մինասյանը իր կարծիքով ավելի լավ էսքիզ էր մշակել՝ ամբողջությամբ տարբեր Թամանյանի հանձնարարածից և գեղեցիկ գծագրել էր, ձևավորել։ Նա հաջորդ օրը Թամանյանին ներկայացրեց ահա այդ գեղեցիկ ձևավորված գծագիրը։ Պետք էր ներկա գտնվել, պատկերացնելու համար թե ինչ օրը գցեց Թամանյանը Մինասյանին. այդ վիճակը ներկայացնելու զորու չեմ՝ ինքս ինձ չէի գտնում, ուր մնաց Մինասյանը։ Մեզ հետ աշխատող իմ դասընկեր Հայկ Դավթյանը, որի աշխատանքից գոհ էին, գրեթե անտարբեր աշխատում էր իր սեղանի առջևում։

Այդ նույն շենքում էր գտնվում Ն. Բունիաթյանի ճարտարապետական արվեստանոցը։ Հաճախ էր լինում, որ միաժամանակ էինք գտնվում Շահումյանի հրապարակին նայող բաց պատշգամբում։ Երբեմն խոսք էր բացվում հայ ճարտարապետության շուրջը. լսում էի նրա կարծիքը ինչպես իր նախագծով կառուցված Գյուղբանկի հենց այդտեղ գտնվող շենքի ճարտարապետության վերաբերյալ, այդպես էլ Թամանյանի նախագծով կառուցված Կառավարական տան ճարտարապետական ոճի մասին։

---

[1] Այժմ՝ Մանկական այգի (Ծ. Կ.)։
[2] Այժմ՝ Անգլիական այգի (Ծ. Կ.)։
[3] Այժմ՝ Վազգեն Սարգսյանի փողոց (Ծ. Կ.)։

Ես ներկա եմ եղել մի խոսակցության, որ օրերից մի օր տեղի էր ունենում իմ աշխատանոցում, ինձնից 2-3 քայլի վրա։ Երևան էր ժամանել մի ճարտարապետ և խնդրում էր, որ Թամանյանը համաձայնի մասնակցել Տաշքենդում և Աշխաբադում կառուցվելիք թատրոնական շենքերի, կարծեմ փակ մրցույթին. Թամանյանը հրաժարվում էր պատվերը ընդունել ծանրաբեռնված լինելու, հոգնած լինելու և առողջական վիճակը այդ գործի մեջ մտնելու հնարավորություն չտալու պատճառաբանությամբ։ Հյուրը իր խնդրանքում այդպես էլ չհաջողեց, բայց արժանացավ Թամանյանի հոժարակամ հանձնառությանը նրան ցույց տալու իր ստեղծագործությունները, մի մասը կառուցված, մյուս մասը նախագիծ վիճակում։

Ինչպես Թամանյանի, նույնպես և Բունիաթյանի այս ձևով անուղղակի հանդիպումների ժամանակ նրանց զրույցներին և գործերին ներկա գտնվելը այն դասերն էին, որ խորապես ընկալվեցին իմ կողմից և ինձ այլևս կողմնորոշեցին իմ հետագա գործունեության ընթացքում։

1935 թ. մի քանի ամիս աշխատեցի նշանավոր ճարտարապետ Գևորգ Քոչարի «Գիպրոգորի» նրա արվեստանոցում, որպես ճարտարապետի օգնական (դիպլոմ դեռ չէի պաշտպանել)։ Այդտեղ Գ. Քոչարի հետ լինելով համահեղինակ, նախագծեցի Արտաշատի շրջանի Գյոդակլու (հետագայում՝ Մարտիկյան, ապա Այգավան) և Վերին Արտաշատ կոլտնտեսային գյուղերի գլխավոր հատակագծերը։ Ինձ համար տպավորիչ էր, երբ Քոչարը Այգավանի իմ մշակած հատակագծում ավելացրեց գյուղի գլխավոր մուտքի աջ ու ձախ թեքադիր երկրորդական մուտք-ճանապարհները. այդ ռացիոնալ էր աջ ու ձախ թաղամասերը գնացողների համար։ Նույնպիսի զգացում ունեցա, երբ Արտաշատի հատակագծում [գծ. 1] գյուղի գլխավոր մուտքը թեքությամբ ուղղեց դեպի գլխավոր հրապարակ։ Այդ կարծես թե հիշեցնում էր Երևանի գլխավոր հատակագծում Թամանյանի Հյուսիսային պողոտայի մի հատվածը՝ հրապարակի մոտից մինչև Թատերական հրապարակը։ Այգավանի ընդարձակման նախագիծը (կիսակոր հավելումով) իրականացրի ես, անձամբ, քանի որ Գ. Քոչարը Մ. Մազմանյանի հետ արդեն Նորիլսկ քաղաքն էր նախագծում ծայր հյուսիս-արևելքում։



Գծ. 1 – Վերին Արտաշատի գլխավոր հատակագիծը, 1935 թ.

(հեղ.՝ Գ. Քոչար, Տ. Մարության)

Այդ արվեստանոցում ես տեսա, թե ինչպես էր Գ. Քոչարը աշխատում կինո «Մոսկվայի» շենքի նախագծի վրա։ Տեմպերամենտը և անմիջապես գծագրի վրա

ստեղծագործաբար աշխատելը տպավորիչ էին (որպես կատարող աշխատում էր Պետո Անանյանը)։

1935 թ. սեպտեմբերին, երբ Քոչարն ու Մազմանյանը վերադառնալու պայմանով մեկնում էին արտասահման (Եվրոպա), ես աշխատանքի տեղափոխվեցի հողժողկոմատի նոր բացվող գյուղերի հատակագծման բաժին։ Այստեղ ես մենակ էի աշխատում և այդպես մենակ էլ աշխատեցի մինչև վերջ իմ բոլոր նախագծերի վրա, բացառությամբ երկու նախագծի, որոնց մասին իրենց տեղում։

Հողժողկոմատում նախագծեցի շուրջ երկու տասնյակ կոլտնտեսային գյուղերի վերակառուցման գլխավոր հատակագծեր, Ներքին Դվինի կուլտուրայի տունը՝ գլխավոր ճակատի սյունակամարաշար օթյակով [նկ. 1], որ 1936 թ. բացառություն էր մեր հանրապետությունում։ 1937/38 թթ. նախագծեցի Երևանի կոոպտեխնիկումի [նկ. 2] և Ստեփանավանի զոովետ տեխնիկումի [նկ. 3] շենքերը, որոնք հայ ճարտարապետության թամանյանական դպրոցի առաջին իրականացումներից էին. այս վերջիններիս կառուցումներն սկսվել էին 1940 թվականին, շարունակվել պատերազմի տարիներին։

ՀԺԿ-ում նախագծվեցին նաև գյուղական փոքր հիդրոէլեկտրակայանները, որոնցից առաջինը Մարտունի հէկ-ն էր [նկ. 4]։ Այս փոքրիկ հէկ-ի շենքի ճակատը մշակելիս առաջին անգամ հանրապետությունում (1936 թ.) իմ կողմից կիրառվեց դուռ-պատուհանների բացվածքների շրջանակների աստիճանաբար պատի թանձրության մեջ խորացող մոտիվը։ Այն կիրառում գտավ իմ հետագա գրեթե բոլոր նախագծերում, այդ թվում Գյումուշ (այժմ Արգել) հէկ-ի նախագիծը մշակելիս (1940/41 թթ.), Սևան հէկ-ի գլխավոր վահանի շենքի նախապատերազմական տարբերակում (1940 թ.), Բայազետի փոքր հէկ-ի շենքում (1940 թ.), Երևանի կոոպտեխնիկումի առաջին հարկի ճակատում և այլուր։ Այս մոտիվը հետագա տարիներում իրենց շինություններում գործադրեցին մեր բոլոր ճարտարապետները, ոչ միայն կրտսերները, այլև ավագները։

***Նկ. 1** – Ակումբ Ներքին Դվինում (այժմ՝ Դվին), 1936 թ. (ճարտ. ՝Տ. Մարության)*

***Նկ. 2** – Երևանի կոոպերատիվ տեխնիկումի շենքը (այժմ՝ Պոլիտեխնիկական համալսարանի մասնաշենք Կորյունի փ. 12 հասցեում, ճարտ՝Տ. Մարության)*

***Նկ. 3** – Ստեփանավանի զոռվետ տեխնիկումի շենքը (ճարտ. ՝Տ. Մարության)*

***Նկ. 4** – Մարտունի ՀԷԿ, 1936 թ. (ճարտ. ՝Տ. Մարության)*

1940 թվականից աշխատանքի անցնելով Թբիլիիդէպի Երևանի բյուրոյում, սկսեցի մշակել Գյումուշ հէկ-ի գլխավոր շենքի ճարտարապետական նախագիծը, դրանում էլ մշակեցի պատուհանների բացվածքների կիսակլոր, աստիճանաբար լայնացող բարավորների մոտիվը: Կիսաշրջագծերի կենտրոնների բարձրացնելու ճիշտ չափը գտնելու նպատակով, առաջին փորձը կիրառեցի Նոր Բայազետի փոքր հէկ-ի [նկ. 5] նախագծում, արդյունքը տեղափոխեցի Գյումուշ հէկ [նկ. 6]: Ճարտարապետական այս մոտիվը ևս մինչ իմ հորինելը ոչ ոքի կողմից չէր կիրառվել:

Նկ. 5 – *Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ) ՀԷԿ-ի պատուհանի բարավորների մոտիվը, 1940 թ. (ճարտ.՝ Տ. Մարության):*



Նկ. 6 – *Գյումուշ ՀԷԿ (այժմ՝ Արգել), 1941-1953 թթ. (ճարտ.՝ Տ. Մարության)*

Հետագայում այդ մոտիվը կիրառում գտավ մեր ճարտարապետներից շատերի՝ Ս. Գուրզադյանի ու Մ. Ալեքսանյանի մոտ (Էջմիածնի լայնէկրան կինոյի շենքում), Ռ. Իսրայելյանի մոտ (Վ. Լենինի թանգարանի մրցութային նախագծում՝ գլխավոր մուտքը), նաև Ապարանի ճակատամարտի հուշարձանում (աջակողմյան խորշը), Գ. Թամանյանի մոտ (Մաշտոցի պողոտայի հարավ-արևմտյան վերջավորության աջակողմյան վեց հարկանի շենքի ճակատի կենտրոնը), Է. Սարապյանի մոտ (Էրեբունի հյուրանոցի երկրորդ մասնաշենքի մուտքը), Օ. Դոխիկյանի ու Լ. Հովհաննիսյանի մոտ (Մամուլի բազմահարկ շենքի շքամուտքը), Ս. Սաֆարյանի մոտ (կառավարական երկրորդ շենքի գլխավոր պուրակին ուղղված ճակատում), Չարենցավանի գլխավոր հրապարակի երկու շենքերում և Էլի ուրիշների մոտ որոշակի վերամշակումներով։

Վերոհիշյալ երկու կարևոր նորամուծությունները ըստ էության հավելումներ են մեր օրերի թամանյանական դպրոցի հնարավորություններին, սահմանների հետագա ընդարձակումներ նորօրյա արգասաբեր իրականացումներում։

«Закфронт»-ի զորամասերում ծառայությունս (1942, փետրվար - 1946, մարտ) վերջացնելով, դեռևս աշխատանքում չձևակերպված, մշակել եմ Սևանի ստորերկյա հէկ-ի նախագծերը՝ գլխավոր վահանի և սպասարկող մասերի, տրանսֆորմատորային աշտարակի և արհեստանոցների շենքը, բաց ենթակայանի տարածքի հյուսիսային և հարավային մուտքերը ցանկապատի կազմում, աղբյուր-հուշարձանը ներքին հենապատերի կազմում, ջրահեռացման թունելի շքաելքը։ Հետագայում այս կառուցվածքի գլխավերևում ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը նախագծեց բանվորի մոնումենտը իր պատվանդանով, որը, սակայն չկառուցվեց։ Իսրայելյանի նախագծով Սևանհէկում կառուցվեց միայն ջրընդունիչը լճի ափին։ Այս վերջինս ծառայեց ընդամենը 10 տարի, որից հետո, ջրի մակարդակի իջնելու պատճառով մնաց անօգտագործելի։ Ճարտարապետ Ս. Սաֆարյանը պիտի մշակեր ստորերկրյա մեքենայական սրահի ճարտարապետությունը արհեստական մարմարով, սակայն չիրականացվեց։ Ս. Սաֆարյանի նախագծով Սևանհէկում կառուցվեց միայն հորիզոնական թունելի շքամուտքը տուֆով երեսպատված հենապատի կազմում։

*

22.09.2001

Հայհիդրոէներգոնախագիծ ինստիտուտում աշխատածս տարիներին (1940-1941 և 1946-1992), մոտ կես դար տևող այդ ժամանակաընթացքում հաճախ եմ կանգնել մեծ ու փոքր դժվարությունների առաջ. պատճառները տարբեր են եղել և մեծ մասամբ սուբյեկտիվ բնույթի։

1940 թ. աշխատանքի անցնելով Թբիլիհիդէպի Երևանի բյուրոյում, ՀԺԿ-ից հետս տարա կոոպտեխնիկումի նախագծի աշխատանքային գծագրերը։ Հիմնարկը ինժեներական կազմ ուներ, ճարտարապետներ էին Ֆրիդոն Յակովլևիչ Ազարյանը և Արաբյան Ցողիկը, որ [վերջինս] մինչ իմ գալը արդեն գնացել էր։ Այստեղ հեղինակային

իրավունքը չէր ճանաչվում, մինչ ես ձգտում էի իմ արածի տերը լինել։ Եթե Ազարյանը ինձ հետ համաձայնեց, որ մինչ այդտեղ գալը նախագծածս տեխնիկումի շտամպում «հեղինակ» գրվելս, մյուսները չհամաձայնեցին, հոնորար տալուց հրաժարվեցին (այդ ժամանակ «հոնորարը» ճանաչվում և վարձատրվում էր), գործը հասավ դատարան, որոշվեց ինձ վճարել 1200 ռ.։ Ես ստացա գումարը, բայց վաստակեցի «թշնամություն» (թեպետ՝ գաղտնի-թաքնված)։

Անկախ նրանից, որ արածս գործը (Սևանի գլխավոր վահանի շենքը, նաև Գյումուշի հաստատված տարբերակը) հավանում էին (գլխավոր ինժեներ Կոստանդին Քեչեկ), բայց և այնպես, երբ կռիվը սկսվեց (22. VI. 1941), դիրեկտոր Հակոբ Մանուկյանը ինձ աշխատանքից ազատեց, ասելով «աշխատանքի ծավալները պակասել են» (այդ իրավունքը չուներ, քանի որ պահեստի հրամանատար էի), բայց ես բանի տեղ չդրի և 22. II. 1942 թ. մեկնեցի բանակ (Սուխում)։ 1946 թ. զորացրվեցի, նույն տեղում ինձ իսկույն աշխատանքի չընդունեցին (տնօրենը Կուզնեցովն էր, փոխարինողը նույն Հակոբ Մանուկյանը)։ Ամռան ընթացքում իրենց պատվերով արի նույն Սևանի շինությունները, որոնք իրականացան, հետո միայն՝ դեկտեմբերին ընդունեցին հիմնական աշխատանքի, այդ օրվանից զբաղվեցի Գյումուշի հետագա մշակմամբ։

Մինչ իմ գալը, աշխատանքի էին ընդունել արդեն հայտնի դարձած Ռաֆո Իսրայելյանին, երևի Գյումուշի նախագիծը անելու։ Նա էլ տեսնելով, որ ես այնումենայնիվ կամ ու վերադարձել եմ, ու իմ հին (հաջողված) գործը շարունակում եմ, իրեն անելիք չտեսնելով, հիմնարկից գնաց, ես մնացի մենակ։

Ռաֆոյին հավանաբար բերել էր Աշոտը (Տեր-Հովհաննիսյան), որ գլխավոր ինժեներն էր, խորհուրդ տված կլիներ իր կին Արծվիկը, որը Ռաֆոյի հետ աշխատում էր միևնույն Արդնախագիծ ինստիտուտում (սանտեխնիկ)։ Մեր ինստիտուտը երբեմն «դրսի» աշխատանք անում էր. ես բերեցի Արզնիի մեծ առողջարանի նախագծի պատվեր, Մանուկյանը չհամաձայնեց, պատվերը տարա Հայպետնախագիծ, Կորյուն Հակոբյանը, որ տնօրեն էր, պահանջեց *երեկոյան* իրենց մոտ աշխատելու համար թույլտվություն Մանուկյանից, վերջինս չտվեց։ Դիմեցի Մոսկվայի Гидропроект-ի տնօրեն

Յուրինովին։ Եկել էր Երևան, կանչեց, գնացի, թույլ չտվեց, ասելով. «Ձեր տեղի ղեկավարները համաձայն չեն»։

Մի այլ առաջադրանք բերի՝ Սառցակոմբինատի կուլտուրայի պալատի նոր տարբերակ. Մանուկյանը չընդունեց, տվի մի այլ նախագծային ինստիտուտ։ Այնտեղ Ռազմիկ Ալավերդյանը ինձ չսպասեց, ինքն արեց (թերևս Ռաֆոյի մասնակցությամբ ?), կառուցեցին III մասի պարկում։

Երբ Սառցակոմբինատի տնօրենը իմ ընկեր Կորյուն Ռուխիկյանն էր, ես էի պալատի նախագիծն արել (Մոսկվայում հաստատվել էր)։ Երբ Ռուխիկյանի պաշտոնը խլեց իր ինժեներ քիմիկոս Ղազարյանը, նախագծման գործը անցավ իր ընկերոջը՝ Ռազմիկին։ Ես հաստատված (5 միլիոն ռուբլի) նախագիծը չտվեցի և փորված կատլավանով պալատը չկառուցվեց։ Սրա նախագիծը Հալաբյանը հավանել էր (տեսել էր 1951-ի ստուգատեսում)։

Գյումուշ հէկ-ի նախագծումը անցավ խաղաղ պայմաններում, քանի որ Մաստկովը կար, ընդունել էր իմ ճարտարապետական լուծումները, նաև իմ շտկումները տեխնոլոգիայում, լուծել էի ավանների հարցերը՝ նոր տեղ ընտրելով Լուսակերտին և այլ հարցեր։ Նախագծման վերջին շրջանում, կառուցման ողջ ընթացքում ի հայտ եկան հակասություններ իմ և իմ տնօրենների միջև։ Բանն այն էր, որ շինանյութերի ընտրման հարցում միակարծիք էինք ես և շինարարության տնօրենները, տարբեր՝ մերոնց հետ։ Մերոնք ձգտում էին էժանացնել, հասարակացնել, շինարարները՝ գնում էին ամեն բանի, որ լավ ստացվի։ Արդեն շշուկներ էին լսվում Ստալինյան պարգևի ներկայացնելու վերաբերյալ, երևում էր Աղաբաբովի և Արուտինովի (ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար) միակամությունը. ժամանակները նպաստավոր էին։ Օրինակ արտաքինի հարցում Արուտինովը առաջարկել էր Գեոքիլիսայի բազալտը (բժշկական ինստիտուտի քարը), մերոնք տուֆեր էին առաջարկում։ Նկատի ունենալով Գեոքիլիսայի բազալտի քայքայվող հատկությունը և տրանսպորտ չունենալը, ի վերջո Աղաբաբովը համաձայնեց, իսկ հետո միանգամայն համոզվածությամբ հավանություն տվեց Արզնիի բազալտին և հետո Ռուբեն Գևորգյանը [լավ չի կարդացվում] (շինարարության գլխա-

վոր ինժեներ, հետագայում Կենտկոմի բաժնի վարիչ) ինձ ուղղեց խիստ մոտիկ՝ Հրազդանի ափին առկա ծակոտկեն բազալտին. հավանություն տվի և տարվեց մոտ 5000 ք. մետր քար, դժվար պայմաններում իրականացվեց (տաշող մեքենա գնվեց, բայց ձեռքով տաշեցին)։

Ներքին ձևավորման մեջ [նկ. 7] մարմարը տեղ գտավ. հատակը գործարանում կար պատրաստ՝ սև մարմար, Սաֆարյանը պատվիրել էր Գիտությունների ակադեմիայի համար, հետո չէր վերցնում, ես անմիջապես վերցրի։ Պատերը Աղվերանի հանքերի մարմարով արինք, սյուները՝ օնիքսով, որի հանքերը Երևանի և Ղամարլուի միջև գտնվող Ախամզալուի [ներկայումս՝ գ. Մարմարաշեն] հանքերից են։ Պատերազմից առաջ մեծ բլոկներով տանում էին Անգլիա, պատերազմի ժամանակ հանքը փակվել էր, դրսում մնացել էին մի քանի բլոկ և կոնգլոմերատի մնացորդ սալեր։ Աղաբաբովը 25 կմ էլեկտրական գիծ անցկացրեց, հանքը բացեց և ներսի պիլոնները երեսպատեց, կոնգլոմերատով դուռը (մեք. սրահում) շրջանակեց՝ եզրը կաղնի փայտով։ Ներքին ձևավորումը՝ քիվեր, առաստաղի գիպսե վարդակներ, սանդուղքների … [չի կարդացվում] (չուգուն) և այլն։ Ամեն ինչ լավ ստացվեց. հայտնի չէ թե ով հայտնեց Մոսկվա, մինիստր Պ… [չի կարդացվում] իմ տնօրենին և ինձ հրամանով «շնորհեց», հետո երբ եկավ, տեսավ, իր երբեմնի դասընկեր Աղաբաբովին ասաց. «Շատ էլ լավ ես արել»։

Ահա այս բոլորի պատճառով իմ տնօրենը ինձ այնուհետև զրկեց հնարավորությունից, որ մյուս հէկ-երը նույն կերպ ձևավորեի. խանգարում էին ամեն բանում, ամեն քայլափոխի։ […]

Գյումուշ հէկ-ից հետո նախագծել եմ Արզնի հէկը [նկ. 8]։ Ձևավորել եմ կիսաստորերկրյա հէկի մուտքը և երկու կիսաբաց էլեկտրաենթակայանները և հետագայում մի սպասարկող շենք։ Ներքին ձևավորմանը մոտ չթողեցին և այդպես էլ գրեթե ոչինչ չարվեց։ Մշակել եմ վերերկրյա զգալի երկարության ակվեդուկի ճարտարապետությունը՝ մեծաթիվ մույթերը (բազալտակոփ), Արզնիի երեք ավանները իրենց շենքերով, հատկապես ձախափնյա մշտական ավանը, որը կառուցելուց հետո վերափոխեցի, դարձրի Արզնիի N 1 առողջարան, մյուս ավաններում՝ ակումբներ և այլ շենքեր։

***Նկ. 7** – Արգել ՀԷԿ-ի ինտերիերը (ճարտ.՝ Տ. Մարության)*

Աթարբեկյան հէկ-ում [այժմ՝ Հրազդանի հէկ] ինձ մոտ թողին միայն արտաքինին։ Ճակատը մշակելիս ինստիտուտի տնօրենը և մի քանի հոգի փորձեցին ինձ զրկել իմ դերից, հայտարարեցին մրցույթ իմ, իմ օգնական Ալիկի և նոր ընդունված Էդիկ Զաքոյանի միջև։ Արդյունքում իմ օգնական Ալիկը անկեղծորեն ասաց. «Ես քո հին էսքիզներից կրկնել եմ, ի՞նչ էիր կարծում ի՞նչ կարող էի անել», Էդիկը չեմ հիշում ինչ էր արել, ես իմ բոլոր էսքիզների կրկնություններն էի բերել, որ ցույց տայի, որ նրանք միայն կրկնել կարող են։ Իմ արածը, որ վատ չէր, Արմո Գեղամիչը, տարավ Սամվել Սաֆարյանի մոտ, նա հավանություն տվեց, նոր միայն ընդունեցին […], տարան նաև Ասցատրյանին (Կենտկոմի արդյունաբերության բաժնի վարիչ), նա թե «Դուք այնքան լավ նախագծեր եք անում, որ մեզ հետ համաձայնեցնելու կարիք չկա», ասեց իմ տնօրենին,

իմ ներկայությամբ։ Այդ շենքում սյուների տարբեր թռիչքները և էլեկտրական մասի ցցված կցակառույցը հնարավոր չդարձրին ավելի լավ բան ստեղծել։ Այդ ուղղությամբ իր ուժերը փորձեց նաև Գեորգի Օռլովը («Գիդրոպրոյեկտի» գլխավոր ճարտարապետ, ակադեմիկոս), բայց թողեց առանց որևէ փոփոխության։ Սրա քիվը Կոտիկ Մարությանը, որը շինարարության գլխավոր ինժեներն էր, լավ չկառուցեց, ես խռովեցի և արդեն չգնացի հեղինակային հսկողության (նույնը և Արզնիի ենթակայանների վերնամասը չծածկելու (բազալտով) համար՝ էլ չէի գնում)։



***Նկ. 8** – Արզնի ՀԷԿ, հանձնվել է շահագործման 1956 թ. (ճարտ. ՝Տ. Մարության)*

Երևանի հէկը նախագծելիս նույնպես կային պրոբլեմներ՝ ձորում դեռ աշխատում էր Թամանյանի I Երհէկը (ներքին բովանդակությունը արդեն ուրիշ էր՝ դարձրել էին էլտեխլաբորատորիա), պետք էր պահպանել անհրաժեշտ ներդաշնակություն, խանգարում էր «ժամանակի պահանջը»՝ խրուշչովյան ժամանակներն էին, պետք էր

անել «ժամանակակից ոճով»։ Արեցի տարբերակներ, որոնց մեջ լավ բաներ կային, եթե նկատի չունենայի «հարևանի» գոյությունը, բայց արի ներդաշնակության պահանջնե-րով և որպեսզի կարողանայի անց կացնել, դրի ճարտարապետների միության սեկցիա-յում, քննեցին (նախագահն էր Արտիկը Կանայան), որոշեցին այդ տարբերակը իրակա-նացնել։ Շինանյութը, որ պիտի բազալտ լիներ, ժողտնտեսության կոմիտեն, որ Լևոն Երզնկյանն էր, ոչ մի կերպ չհամաձայնեց, արինք Անիի տուֆով (Գեորգի Օրլովը հավա-նություն տվեց, որ ձորում երանգներ մտնեն, արդեն կային Արթիկ տուֆի պատեր)։ Իմ պահանջին չընդառաջեցին, որ շենքը հետ դրվեր, որ Թամանյանի Երգէսից առաջ չլիներ և նրան չճնշեր, չարին (այստեղ ինձ դավաճանեց քաղաքի գլխավոր ճարտարա-պետ Աղաբաբյանը), պահանջեցի, հոդվածներ գրեցի (մի հատ էլ ստորագրեցին Մազ-մանյանը, Իսրայելյանը, Սահինյանը), որ Երգէսը կառուցվի Արաբկիրի մեծ կամուրջի վերևում, իսկ Հրազդանը մնա քաղաքի սահմաններում անձեռնմխելի. չընդառաջեցին, ԿԿ I քարտուղար Զարոբյանը ինձ ճնշեց՝ իհարկե մերոնց միջոցով (օգնությամբ)։ Իմ տարբերակի դեպքում կկառուցվեր նաև Արգավանդ հէկը։ Այս վերջինը այդպես էլ չկառուցվեց, ջրերը տվին ոռոգման։

Գ. Աղաբաբովը, որ արդեն ՍՍՀՄ մասշտաբի աշխատող էր (Մոսկվայում), մի օր եկավ Երգէսի կառուցումը տեսնելու, նախատեց, որ ժամանակակից չեմ արել, ասի՝ այս թերևս վերջին հնարավորություններից է, որ հայկականով եմ անում։ Եվ իսկապես, Որոտանի կասկադը այդպես էլ գնաց անհոգի ճարտարապետությամբ։

Ես նախագծել էի նաև Արգավանդ հէկը՝ լավ էր ստացվել, բայց չկառուցվեց։ Հետո նախագծեցի Շնողհէկը, կասկադը չկառուցվեց, արի Հյուսիսային Օսեթիայի Զարամագ հէկերը (2), պարոն Խ. Բաբայանը 15.000 ռուբլու հետ հանձնեց Մոսկվային, արեց Գաբրիելյանը (որ շատ չանցած մահացավ), արեցի նաև Կաբարդինո-Բալկարիայի Առուշիգերի և Սովետսկայա հէկերը։ Յագուբովի և Պետրոսյանի հետ արի Բուի հէկը (Գանայում)՝ կառուցվեց։ Իմ առաջարկած Տաթևի տարբերակը թողին [չընդունեցին], նորն արինք այդ երկուսի հետ և կառուցվեց ռադիոյի տնական տուփի խոշորացրած

օրինակը։ Բուին, որ արեցի Ռաֆոյի մասնակցությամբ, վատ չէր, նույնպես թողեցին [չընդունեցին], նորն արեցինք։

Միմյանց անհարիր կարծիքներ

Ճարտարապետ Գևորգ Քոչարը 1931 թ. աշնանը, երբ ես արդեն ինստիտուտի երկրորդ կուրսի ուսանող էի, մտնելով լսարան, առաջադրանք տվեց նախագծել գյուղական գրադարան-ընթերցարան։ Ես մոտս ոչ թուղթ ունեի, ոչ էլ մատիտ, գրպանումս գտա 5 սմ երկարության քիմիական մատիտ և հեռախոսատետր 7x5 սմ չափերի քառակուսի տողերով։ Ես գծեցի երկու տարբերակ, և երբ նա մոտեցավ ինձ, ասացի՝ այսպես-այսպես, ոչ թուղթ ունեի, ոչ մատիտ, ահա արածս։ Նայեց, թե «սա լավ է», ներկայացրի մյուս տարբերակը, ասելով թե «այս մեկն էլ», նայեց, թե «սա էլ վատը չէ, աշխատե՞լ եք որևէ արվեստանոցում»։ Ես զարմացած բացասաբար պատասխանեցի։ Նա, թե «հապա ինչու՞ ճարտարապետների խումբ չես գնացել»։ Ասացի «չտարան, փորձեցի, հետ տվին»։ Նա, թե «լավ, ես Միշային կասեմ, կտանի»։ Ես հազիվ գլխի ընկա, որ Միշան ինստիտուտի տնօրեն ընկեր Մազմանյանն է։ Իրեն-բոլորին էլ առաջին անգամն էի տեսնում, բայց լսել էի իր մասին, ցանկանում էի տեսնել և անսպասելի հանդիպումը եղավ։

1996 թ. երբ Ճարտարապետների միությունում նշում էինք Գևորգ Մուշեղյանի 85 ամյակը, ամեն ինչ վերջացել էր, ես պատմեցի վերևում շարադրածս, Գևորգը հիշեց ու ասաց. «Ուրեմն քո՞ մասին էր խոսքը։ Այն ժամանակ (1931 թ.) Քոչարը գոհունակությամբ ասաց. «Տեսեք ի՛նչ ճարտարապետացու եմ բերելու այս խումբը»։

Քոչարին երևի դուր էր եկել իմ նախագծի տրամաբանական լինելը՝ շարժման գրաֆիկը և պարզ, անպաճույճ հատակագծային հյուսվածքը։

Բայց ահա մի այլ դեպքի մասին, որ ճիշտ հակառակ տպավորության արդյունք էր։

1935 թ. աշնանից աշխատում էի ՀԺԿ-ի հատակագծային նորաբաց բաժնում, կազմում էի Արարատյան դաշտի գյուղերի գլխավոր հատակագծեր, վերակառուցման նախագծեր։ 1936 թ. ընթացքում Գյուղէլեկտրոյի բաժնի հանձնարարությամբ, հիմնական աշխատանքից դուրս կազմում էի գյուղական փոքր հէկերի շինարարական մասի գծագրերը, մշակում ճարտարապետական մասը։ Երևի 1938 թվականին էր, Գ. Քոչարին և Մ. Մազմանյանին «գործուղել» էին Սիբիրի ծայր հյուսիսում ստեղծելու Նորիլսկ քաղաքի գլխավոր հատակագիծը։ Այստեղ Ճարտարապետների միությունում ղեկավարի դեր էր ստանձնել ճարտարապետ Սամվել Սաֆարյանը։ Նրա առաջարկով Ճարտարապետների միության ինչ-որ սեկցիայում կազմակերպել էին իմ ստեղծագործական հաշվետվությունը։ Ես ներկայացրել էի 4-5 փոքր հէկերի ճակատների մշակումներ վատմանի վրա, ներկված (отмывка) վիճակում։ Այդ ժամանակ Ճարտարապետների միությունը տեղադրված էր Շահումյանի հրապարակում՝ Բունիաթյանի նախագծով կառուցված Գյուղբանկի անկյունային մասի առաջին հարկում, որտեղ մուտքի հարթակը կենտ սյան հետևն էր, երկու կամարներով։ Հաշվետվությանս քչերն էին եկել, այնտեղ էր նաև Մոսկվայից Երևանում հանգստացող, ակադեմիկոս Ի. Վ. Ժոլտովսկու արվեստանոցում աշխատող հայ ճարտարապետներից Չալտիկյանը, ներկաներից հիշում եմ Ա. Կանայանին, Վ. Հարությունյանին։ Սաֆարյանը անհանգստացած էր, որ Ռ. Իսրայելյանը խոստացել էր գալ և անպայման ելույթ ունենալ, իր խոսքն ասել, բայց նա էլ ուշանում էր։

Ս. Սաֆարյանը խոսքը տվեց ինձ, ես գրել էի, ընթերցեցի։ Երբ վերջացրեցի, Սաֆարյանը առաջարկեց ելույթներ ունենալ, կարծեմ այդպիսիք չեղան. Սաֆարյանը դիմեց Չալտիկյանին, նա, թե «ես ելույթ չեմ ունենա, նախագծերի մասին էլ ասելիք չունեմ, բայց հեղինակի գրավոր ելույթը հուզիչ էր ու տպավորիչ»։ Նա իր խոսքն ասաց նստած տեղից, առանց բարձրանալու։ Մինչ այդ Ռ. Իսրայելյանը հայտնվեց և ասեց իր խոսքը. այդ շատ կարճ էր՝ «Տիրան Մարությանը նախապատրաստված չէ ճարտարապետությամբ զբաղվելու գործի համար»։ Սաֆարյանը դիմելով նրան, հարցրեց «ի՞նչ ես առաջարկում, ի՞նչ է ասելիքդ». Ռ. Իսրայելյանը ոչինչ չի ավելացնում։ Ս. Սաֆարյանը դառ-

նում է նայում պատից կախված նախագծերին, մոտենում, ուշադիր նայում, ձեռքով գոհունակության նշաններ անում, հասկացնում, որ համաձայն չէ Իսրայելյանին. նախագծերը, որ պարզ էին, առանց պաճուճանքների, հայկական ավանդականով կատարված, Սաֆարյանին բավարարում էին, մոտ էին իր պարզը սիրող զգացմունքին։ (Ռաֆոյի ելույթի ժամանակ արդեն կային գյուղական իմ հէկերը, որոնք՝ ըստ օտարերկրացիների «Ձեր հէկերը զարդարում են հայոց բնությունը. հայեցի արված ճարտարապետական գործերից են»։) Գրավոր զեկուցումս մեկը խնդրեց, որ հետո վերադարձնի, սակայն ոչ ոք չվերադարձրեց, ես էլ մոռացության տվի, մանավանդ չէի հիշում, թե ով վերցրեց, կարծեմ Արտիկն էր՝ Կանայանը (սևագրությունը հետո գտա)։

Ես հասկացա Ռաֆոյին, նա ճիշտ էր ասում, որ Ճարտարապետականը գալու չէի նախապատրաստվել, և ընդհանրապես բարձրագույնի մասին չէի մտածում, բայց այդ տարին (1930 թ.) նորավարտներին ընդունում էին առանց քննության և իմ հորեղբայր ինժեներ շինարար Կամսար Բեգջանյանի հորդորով թղթերս ուղարկեցի, ընդունվեցի։ Թղթերում ներկայացել էի որպես բանվոր. ամռան ամիսներին բանվորություն էի անում քիմկոմբինատում և Զորագէս-Լենգէս էլեկտրահաղորդման գծի հետախուզական խմբի կազմում (Ս. Սաֆարասբեկյան, Օ. Սապոնջյան, Մ. Սիրականյան, Մ. Մարտիրոսյան, Ա. Չիֆթալարյան - հիդրոֆակի III կուրս փոխադրված ուսանողների բրիգադում) և դիմումս էլ ուղարկել էի հիդրոֆակի համար, բայց 1930թ. հիդրոֆակի I կուրս չէր բացվել և ես շինֆակի ուսանող դարձա։

Իմ համեմատությամբ Ռաֆոն մոտ 10 տարվա (1926-1936) նախապատրաստություն էր անցել Վրաստանում և Մոսկվայում և այլուր։

Ճարտարապետ դառնալու համար ոչ միայն լավ պետք է նկար գիտենալ, այլև լավ տրամաբանել. Ռաֆոն մտածում էր միայն առաջինի մասին, մինչ ինձ մոտ գերակշռում էր երկրորդը՝ տրամաբանությունը։ Ռաֆոն նկարիչ-ճարտարապետ էր, ես ճարտարագետ (ինժեներ) - ճարտարապետ, իմ դիպլոմում այդպես էլ գրված է և այն «կարմիր» դիպլոմ է։

Այս է պայմանավորել, որ Ռաֆոյի շենքերում, առանց բացառության, քանդակը կա, դրանցով էլ նրա շենքերը շահում են, մինչ իմ շենքերից ոչ մեկում քանդակը չկա, կան այլ կողմեր, որոնցով շահում են նաև իմ շենքերը։

Ինձ հետ ուսանողներ կային, որ հիանալի նկարում էին, սակայն այդպես էլ ճարտարապետ չդարձան, բայց կային ինձ նման «չնախապատրաստվածներ», որոնք ճարտարապետություն ստեղծելու ավելի ճիշտ ճանապարհի վրա էին հենց սկզբից, մինչ լավ նկարող մի քանի լավ ճարտարապետներ ավելի ուշ եկան ճիշտ ճանապարհ։ Կառուցված շինությունները իրենց գոյությամբ հավաստում են իմ այս նկատումը։ Փույթ չէ, թե լավ նկարողներից ոմանք շատ անուն ու կոչումներ վաստակեցին, մյուսները՝ ոչ, ի վերջո անաչառ հետազոտողներ եղան, որոնք ամեն ինչ դրին իրենց տեղում, թերևս Վ. Վ. Բլոխինի գրքույկի 32-րդ էջի գնահատականը բավարար համարվի այդ հավաստելու համար։ Ահա այդ հատվածը հայերեն թարգմանությամբ «Արդյունաբերական շինարարության մեջ կրող պատի տեկտոնիկ տրամաբանության արտահայտության որոշ կոմպոզիցիոն հնարքների իրականացման օրինակ կարող են ծառայել մասնավորապես Գյումուշի հիդրոէլեկտրակայանի շենքը (ճարտարապետ Տ. Մարության), ինչպես և Երևանում տարբեր տարիների տուֆակերտ կամ բազալտակերտ պատերով կառուցված արտադրական շինությունները, այդ թվում՝ Երևանի հիդրոէլեկտրակայանի մեքենայական սրահի շենքը (ճարտարապետ Ա. Թամանյան), սառցարանը (ճարտարապետ Գ. Աղաբաբյան), գինու մառանները (ճարտարապետներ Ռ. Իսրայելյան և Գ. Քոչար), «Արարատ» տրեստի կոնյակի գործարանը (ճարտարապետ Հ. Մարգարյան) և ուրիշներ։ Անհրաժեշտ է նշել, որ այդ արդյունաբերական օբյեկտների ճարտարապետության մեջ, որոնց ճակատների կոմպոզիցիոն հորինվածքում օգտագործված են ժողովրդական ճարտարապետության մոտիվներ, քարակերտ կրող հոծ պատի տեկտոնիկ տրամաբանությունը արտահայտված է մեծ վարպետությամբ …»[4]։ Նկատենք, որ այստեղ նշված անուններից Թամանյանը մեծահռչակ ճարտարա-

[4] *В. В. Блохин*. Композиция в промышленной архитектуре. М., 1977, с. 32.

պետ է, երբեմնի Ռուսական կայսերական ակադեմիայի ղեկավար անձնավորություններից, Մարգարյանը՝ ԽՍՀՄ Շինարարության և ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ, Աղաբաբյանն ու Քոչարը՝ այդ նույն ակադեմիայի թղթակից-անդամներ են, Իսրայելյանը՝ ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ, ես, որի գործը նշվում է առաջինը՝ ՀՀ վաստակավոր շինարար, ճարտարապետի կոչում չունեմ։

Եվս մի փոքրիկ վկայություն՝ ԳՖՀ-ի և Լյուքսեմբուրգի միացյալ պատվիրակության անդամ, «Կրաֆվերկ-ալտ-Վյուրտեմբերգ» բաժնետիրական ընկերության դիրեկտոր Վիլլի Տեգետոֆը Երևանից մեկնելիս հայտարարել է. «Ամբողջ կյանքում ես Գյումուշգէսի նման գեղեցիկ էլեկտրակայան չէի տեսել»։

Այս երկու մեջբերումները իրենց նշանակությամբ տարբեր մտորումների ու մտահանգումների առիթներ են ստեղծում հատկապես ճարտարապետ-նկարիչների, ճարտարագետ-ճարտարապետների, նկարչի «ձեռք» ունենալու կամ չունենալու, լավ տրամաբանելու, ստեղծագործական ձիրք, նորարարի շունչ ունենալ-չունենալու վերաբերյալ, ճարտարապետ դառնալու նախապատրաստություն ունենալ-չունենալը ճակատագրական լինելու վերաբերյալ առկա հայացքները այժմ և անցյալում։

Վերաբերմունք ցույց տալու վերաբերյալ

Եթե մեր Արվեստի ինստիտուտի հրատարակած գրքում «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» գրքում (1963) Գյումուշի և Երգէսի նկարները դրին ու Գյումուշի մասին դրական զուսպ խոսքեր ասին (հեղինակ՝ Լևոն Բաբայան), ապա այդ անդրադարձն էր մինչ այդ իմ նախատինքի խոսք ասելու, որ ինչ է, արդյունաբերական շենքերի ճարտարապետությունը ճարտարապետություն չէ՞։ Դեռ այդ ժամանակ էլ իմ հարցին, թե տեղում Գյումուշը տեսե՞լ է, տվեց բացասական պատասխան. ուրեմն նրա մասին գրում է առանց տեսնելու։

Գյումուշը կար, երբ Վ. Հարությունյանը ինչ-որ, թերևս Շինարարի օրվա առիթով հոդված էր գրել և որպես իմ նվաճում հիշել էր, թե ինչպես երևում է, Մարությանը գյու-

ղական հէկերի ճարտարապետությանը համապատասխան ձևեր է գտել՝ «образ»։ Այս ակներև չնկատելու, չգնահատելու, առաջավորից հեռու պահելու համար է։

Հովիկը ակադեմիկոս էր, հավանել էր Ազատության պողոտայի իմ համալիրը (ինձ հայտնեց Լևոն Զորյանը), որ շատ մեծ նվաճում է։ Մինչ Լևոն Բաբայանը, որ գործի մեջ էր, տեղ չտվեց պարգևատրելու համար. մինչ Հովիկը «Архитектура СССР» հանդեսի համարում մեծ հոդվածի հետ միայն իմ շենքերից մեկի լուսանկարն էր դրել։

Չնկատելու կանխամտածված երևույթներ են՝ Լոլա Դոլուխանյանի գիրքը հայկական արվեստի մասին 50 տարում՝ բոլորի մասին կա, բացի ինձնից։

Հայ ճարտարապետությանը նվիրված գրքում (հեղինակներ՝ Վարազդատ Հարությունյան, Մուրադ Հասրաթյան և Արսեն Մելիքյան) իմ գործերը չկան և իմ անունը չկա։

Հայ ճարտարապետությանը նվիրված գրքում՝ գրված Արծվին Գրիգորյանի և Մարտին Թովմասյանի կողմից՝ բոլորը կան, ինձնից բացի։

Ոչ մի անգամ Մոսկվա [ճարտարապետների] համագումար մեկնող պատգամավորների մեջ չեմ եղել, չնայած եղել են այնպիսիները, որ ոչինչ չեն (արել) թողել։

Ճարտարապետների Միության վարչությունում չեմ եղել, բացի մի անգամից (երկու հերթ՝ տաս տարի), այն էլ Լևոն Զորյանի առաջարկով, որպես իմ գործի ասպարեզի միակ ներկայացուցիչ։

Պատվավոր կոչումներ չունեմ (վաստակավոր կամ ժողովրդական ճարտարապետ), թեպետ իմ գործերով ամենաշատն եմ կապվել ժողովրդի հետ։

Արվեստի վաստակավոր գործիչ չեն ներկայացրել։

Վաստակավոր շինարարի կոչում (1961) տվել են Հովիկի շնորհիվ (երբ կառուցվել էր Երևան հէկը և Ազատության պողոտան)։

Չորս տարի եղա բանակում՝ կռվի ժամանակ, կառուցեցի դոտեր և դզոտեր, եղա Զակֆրոնտում, բայց Ճարտարապետների միության ղեկավարությունը ինձ որպես «պատերազմի մասնակից» չեն ճանաչել։

1943 թ. ֆրոնտից արձակուրդ եկողներին պահեցին-ազատեցին, մինչ ինձ նույն 1943 թ. ուղարկեցին Զակֆրոնտ – այստեղ չփորձեցին պահել։

[…]

Թե որ իմ որոշ գործեր բարձրարժեք են, հետ չեն մնում մեր «դասականների» գործերից, ապա ես կարող էի սպասել «վերաբերմունքի», մինչ ոչ միայն այդ չի եղել, այլ ավելին, հեռու են պահել. Օրինակ, հայ ճարտարապետության նորակառույցների շրջիկ ցուցահանդեսի ցուցանմուշների շարքում ոչինչ ինձնից չկա, հետագայում մեկ-երկու տարի Լևոն Իգիթյանը (Միության քարտուղար Արծ. Գրիգորյանի օրոք) իմ Գյումուշի նեգատիվը պահեց դարակում, հազիվ հետ վերցրի […]։ Իմ Վանաձորի աղբյուրը 1944 թ. մրցույթում տեղ չստացավ, մինչ ամենալավը համարվեց (ըստ Արտ. Կանայանի)։ Իմ Գյումուշը, նույնիսկ ավարտելուց հետո, չտեսնելու տվին, ոչ մի տեղ չներկայացրին, մինչ այն շատ-շատերից բարձրարժեք է։

Ռաֆոյի մասին գրվել են հոդվածներ, *արժանավորապես գնահատել, դրվատել.* գրել են մոտ 40 անձնավորություններ մեկ, երկու անգամ, բայց ահա *Վարազդատ Հարությունյանը* գրել է 14 անգամ (1944-1983 թթ. ընթացքում), այժմ այդ թիվը հասած կլինի 20-ի։

Լևոն Բաբայանը գրել է 8 անգամ, Յուրի Յարալովը՝ 6 անգամ և այլն։

Չէ՞ր կարելի, որ այս պարոն «տեսաբան-պատմաբանները» մեկական անգամ էլ գրեին Երևանը և Հայաստանը լավագույնս կերտող ճարտարապետների մասին, չէ՞ որ այդ «պարտականությունը» վերցրել էին իրենց վրա։

Վ. Հարությունյանի անունը «Հայ ճարտարապետության պատմության» առաջին հատորի Արվեստի ինստիտուտի գրած «Երկու խոսքում» հղում են 6 անգամ, մինչ ոմանց գործը չգնահատելուց զատ, որակել են «անհասկանալի» էպիտետներով։

Իմ հրատարակած հինգ [2003 թ. լույս տեսավ հեղինակի թվով վեցերորդ մենագրությունը՝ «Հայ դասական ճարտարապետության ակունքներում»] զգալի՝ ծավալուն գրքերի մասին ոչ մի գրախոսություն չգրվեց, որ վերոհիշյալ «մասնագետ-

ների» սրբազան պարտականությունն էր. դեռ ավելին, ուրիշների «նորամուծությունները» իրենց մոտիկներին վերագրելու կեղծ փորձեր են արվել (գրավոր)։

Այս և այլ փաստեր, ըստ էության ինչ-որ չափով աղավաղվել են մեր արվեստի վերջին 70-ամյա պատմությունը։ Ինչ վերաբերում է հայ-վրաց ճարտարապետությունների փոխհարաբերությունների հարցին, ապա տարել են «ազգադավ» քաղաքականություն և ուսանողների միակողմանի ուսուցում-դաստիարակություն։ Կարելի է ափսոսել, որ այս կարևոր հարցերին հանգամանորեն անդրադառնալու ոչ ժամանակ կա և ոչ էլ ուժ ու հնարավորություն։ Թերևս նոր սերնդի «առողջ» ներկայացուցիչները կանդրադառնան դրան պատշաճորեն։

Այս ամենը այսպես չէր լինի, եթե մեր գործունակ մտավորականները քար անտարբերություն չցուցաբերեին մեր առօրյա «անցուդարձին»։ Հենց այդ անտարբերությունն է (նաև վերևներում), որ երբեմն «գլուխգործոցներ» ստեղծելու և կառուցելու փոխարեն, կառուցվեցին և կառուցման մեջ են պակաս գնահատման արժանի գործեր. այս ոչ մի կերպ հանդուրժել չէր կարելի։

Այս կերպ «պարզ ու մի քիչ էլ անհամեստ լինելու» համար ես ինձ ներում եմ, քանզի այս միակ և վերջին անգամն է։

[շարադրվել է 2001 թ.]